

ԿԱՆՈՆ ՆՇԱՆ ՕՐՀՆԵԼՈՒ

Մատանիները ափսէի մը վրայ կը դնեն, իսկ խօսեցեալները կը կանգնին իրարու դիմաց:

Կ'օրնենք մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՝ անունդ: Թող զայ արքայութիւնդ: Թող կատարուի՝ քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնապէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ Չարէն ազատէ՛: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն:

Սարկաւագը կը ձայնէ.

Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ: Ընդունէ՛ մեր խնդրանքը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

Քահանան կ'ըսէ.

Օրհնութիւն եւ փառք տանք Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից. ամէն:

Ապա կ'երգեն.

ԽԱԶԻ ՇԱՐԱԿԱՆ ԱԿ.

Նշշանաւ ամենայաղթ խաչիւրդ քո քրիստոս պահպանեա զմեզ մարդասէ՛ր յաներեւոյք թշնամոյն. զի դու միայն ես թագաւոր փառաց օրինեալ յախտեա՞ն:

Զու ամենայաղթ խաչիդ նշանով մեզ պահպանէ՛ աներեւոյք թշնամիէն, ո՞վ մարդասէր Քրիստոս, որովհետեւ միակ թագաւորն ես դուն՝ յաւէտ օրնեալ, որուն կը պատկանի փառքը:

ԱՊՈԹ-Ք

Օրհնեալ ես, Տէր Աստուած, բոլոր արարածներու արարիչ: Դուն ես միակ բարերարը եւ կարողը: Դուն՝ քու հրամանովդ ստեղծեցիր բոլոր արարածները. երկինքն ու երկիրը եւ ինչ որ կայ անոնց մէջ: Գետնէն հող առիր եւ աստուածային քու Աջովդ մարդը ստեղծեցիր, եւ գայն քեզի կերպարանակից ընելով՝ տէր եւ իշխան կարգեցիր երկրաւոր բոլոր արարածներուն վրայ: Ապա տեսնելով անոր մինակութիւնը, ըսիր. »Լաւ չէ որ մարդը մինակ ըլլայ. իրեն նման օգնական մը տանք իրեն«: Եւ մարդուն վրայ թմրութիւն եւ քուն բերելով, անոր մէկը առիր եւ անկէ կինը շինեցիր ու մարդուն տուիր որպէս խօսակից եւ կենակից՝ որդենութեան միաւորութեան համար:

Արդ, կ'աղաչենք քեզի, ո՞վ Տէր, արարչական խնամքիդ իրեն արտայայտութիւն՝ օրինէ՛ խօսեցեալ այս ծառադ եւ աղախինդ եւ օրինէ՛ իրենց մատանիները, որոնք իրենց յօժարակամ սիրոյն խորհրդանիշներն են: Զանոնք պահէ խաղաղ եւ սիրով միացած՝ քու սուրբ երկիլովդ, եւ արժանի ըրէ սուրբ ամուսնութեան ցանկալի սուրբ պսակին հասնելու: Առաջնորդէ՛ զիրենք, որ առաքինի կենցաղով եւ բարի գործերով՝ երջանիկ կեանքի հասնին: Եւ սուրբ խաչին զօրութեամբ ամրացնելով՝ ազատէ՛ զիրենք աշխարհի բոլոր փորձանքներէն եւ սատանային որոգայթներէն. որովհետեւ ողորմած եւ մարդասէր ես, եւ

քեզի՝ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յալիտեանս յալիտենից. ամէն:

**Աղօքքէն եսոք Փեսացուն Հարսնցուին մատանին կ'անցընէ անոր աջ մատնեմատին, նոյնպէս Հարսնցուն
Փեսացուին մատանին կ'անցընէ ասոք աջ մատնեմատին:**

**Այս հաճգրուանին, Քահանան կամ մախագահող Եկեղեցականը խրատական քանի մը խօսք կ'ընէ, այժմէն
յիշեցնելով՝ ամուսնական կեանքի մէջ իրենց փոխադարձ պատասխանատուութիւնն ու
պարտաւորութիւնները:**

Խօսքի աւարտին Սարկաւագը կը ձայնէ.

ՔԱՐՈՉ

Սուրբ խաչին ապահնելով աղաչենք, որ Տէրը անով ազատէ մեզ մեր մեղքերէն եւ իր ողորմութեամբը փրկէ: Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ԱՊՕԹՔ

Քրիստոս, մեր Աստուածը, որ քեզի հաւատացողներուն պահապանն ես եւ յոյսը, սուրբ եւ պատուական Խաչիդ հովանինին տակ խաղաղութեան մէջ պահէ ու պահպանէ եւ օրինէ՛ նորոգ նշանուած այս զոյզը, անոնց ծնողներն ու պարագաները եւ ներկայ հաւատացեալ ժողովուրդը: Փրկէ՛ երեւելի եւ աներեւոյթ թշնամիներէն, եւ արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ. Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յալիտեանս յալիտենից. ամէն:

Ապա Տէրունական աղօքքը կ'ըսէ.

Կ'օրնենք մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ: Թող զայ արքայութիւնդ: Թող կատարուի՛ քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք, այլ մեզ Զարէն ազատէ՛: Որովհետեւ քո՛վկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն:

†††